ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

<<01>> մարտի 2017թ. N 100

ք. Արմավիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ, ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԿԱԶՄԸ, ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՇՏԱԲԻ ԿԱԶՄԸ ԵՎ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.22 կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի N46-Ն որոշման դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2017 թվականի հունվարի 19-ի N14 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2017 թվականի հիմնական միջոցառումների պլանի 5.2.1 կետը, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետի 2017 թվականի փետրվարի 22-ի թիվ 15/142 գրությունը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում շտաբային ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման նպատակով.

***որոշում եմ՝***

1. Հայասատանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանում 2017 թվականի մարտի 23-ին անցկացնել <<Ապարանի ջրամբարի պատվարի փլուզման վտանգի դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպումը>> թեմայով շտաբային ուսումնավարժություն:
2. Հաստատել շտաբային ուսումնավարժության ղեկավար կազմը՝ համաձայն N1 հավելվածի:
3. Հաստատել շտաբային ուսումնավարժության ղեկավարման շտաբի կազմը՝ համաձայն N2 հավելվածի:
4. Հաստատել շտաբային ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանը՝ համաձայն
N3 հավելվածի:
5. Ուսումնավարժությանը ներգրավել՝

1) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողովին.

2) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի տարահանման հանձնաժողովին.

3) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչությանը.

4) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդ, Այգեշատ (էջմ.), Դողս, Աղավնատուն, Մրգաստան, Ծիածան, Ծաղկունք համայնքների ղեկավարներին (համաձայնությամբ):

6. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետ, փրկարար ծառայության գնդապետ Ա. Մարգարյանին՝

1) կազմակերպել ուսումնավարժության պլանավորող փաստաթղթերի ժամանակին մշակումը և հաստատումը համաձայն ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանի.

2) կազմակերպել ուսումնավարժության մասնակիցների նախապատրաստումը համաձայն ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանի.

3) ուսումնավարժությանը պատրաստ լինելու մասին զեկուցել 2017 թվականի մարտի 20-ին.

4) ուսումնավարժության անցկացումից հետո 5-օրյա ժամկետում ներկայացնել ուսումնավարժության անցկացման մասին ամփոփագիրը:

7. Ուսումնավարժության մասնակիցներին՝

1) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության հետ ճշգրտել <<Հայաստանի Հանրապետության Արամավիրի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության>> և <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի բնակչության տարահանման>> պլանները.

2) ուսումնավարժության ընթացքում իրականացված միջոցառումների մասին ներկայացնել համապատասխան զեկույցներ:

8. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ Մ.Քարտաշյանին

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

*ՄԱՐԶՊԵՏ* *Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ*

«Հ Ա Ս Տ Ա Տ Ո Ւ Մ  Ե Մ»
Շտաբային ուսումնավարժության
ղեկավար, ՀՀ Արմավիրի մարզպետ

Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

« 01 » 03 2017թ.

# Պ Լ Ա Ն
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ

| Հ/Հ | Հաղորդման ժամանակը | Միջանկյալի բովանդակությունը | Ով է հանձնում | Ում է հանձնում |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Ժ.12:15 | Միջանկյալ թիվ 1<br>Տեղի է ունեցել Քասաղ գետի ափապատնեշի լվացում Դողս և Մրգաստան համայնքների տարածքներում՝ մոտ 600մ. | Ղեկավարման շտաբ | Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչությանը, Դողս և Մրգաստան համայնքների ղեկավարներին |
| 2 | Ժ.12;30 | Միջանկյալ թիվ 2<br>Մրգաստան համայնքից Էջմիածին քաղաք բնակիչներ տարահանող ավտոբուսը դուրս է եկել երթևեկելի հատվածից և բախվել հեռախոսասյանը, ավտոբուսում կան վիրավորներ: | Ղեկավարման շտաբ | ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչությանը, մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությանը. |
| 3 | Ժ.12:40 | Միջանկյալ թիվ 3<br>Փլուզվել է Ամբերդ- Այգեշատ սահմանագծի Քասաղ գետի անցումային կամուրջը | Ղեկավարման շտաբ | ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչությանը, Մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնին, Ամբերդ և Այգեշատ համայնքների ղեկավարներին |
| 4 | Ժ.14.00- | Միջանկյալ թիվ 4<br>Այգեշատ համայնքի դաշտերում հայտնաբերվել են անկած 6 խոշոր և 11 մանր եղջերավոր անասուններ: | Ղեկավարման շտաբ | Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչությանը, Այգեշատ համայնքի ղեկավարին |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 5 | ժ.14.30 | Միջանկյալ թիվ 5<br>Փակվել է ավտոճանապարհի Ծիածան- Ծաղկունք հատվածը ջրաբերուկների պատճառով | Ղեկավարման շտաբ | ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչությանը, Մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնին, Ծիածան և Ծաղկունք համայնքների ղեկավարներին |
| 6 | ժ.15.00 | Միջանկյալ թիվ 6<br>Ծաղկունք համայնքում փլուզվել են ափամերձ 4 առանձնատներ, 9 առանձնատներ լցվել են տիղմով և այլ ջրաբերուկներով, խցանվել են ճանապարհները | Ղեկավարման շտաբ | Արմավիրի ՄՓՎ ՃԿԿ, մարզպետարանի քաղաքաշինության վարչությանը, Ծաղկունք համայնքի ղեկավարին |
| 7 | ժ.15.15 | Միջանկյալ թիվ 7<br>Ամբերդ համայնքի ջրագծերի վնասվելու հետևանքով ցեխաջրերը խառնվել են խմելու ջրին: | Ղեկավարման շտաբ | «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ «Կենտրոն» տարածքային մասնաճյուղի Էջմիածնի տեղամասին, Պետական հիգիենիկ-հակահամաճարակային տեսչության «Արմավիրի փորձագիտական լաբորատորիա» ՊՈԱԿ-ին, Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությանը Ամբերդ համայնքի ղեկավարին |
| 8 | ժ.15.30 | Միջանկյալ թիվ 8<br>Աղավնատուն համայնքում նկատվում են թալանի փորձեր: | Ղեկավարման շտաբ | Ոստիկանության Արմավիրի մարզային վարչության պետին |
| 9 | ժ.16.20 | Միջանկյալ թիվ 9<br>Ջրածածկված համայնքներում բնակչության թիվը կազմում է 12400 մարդ, տուժել են 8300 մարդ, վիրավորվել են 82 մարդ, զոհվել են 14 մարդ, անհայտ կորել են 7 մարդ: | Ղեկավարման շտաբ | Մարզային ծառայություններին |
| 10 | ժ.16.40 | Միջանկյալ թիվ 10<br>Դողս համայնքից Դաշտ համայնք տարահանված բնակչությանը չի բավականացնում մահճակալները: | Ղեկավարման շտաբ | Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը, Դաշտ համայնքի ղեկավարին |

Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ,

Արմավիրի ՄՓՎ պետ, փ/ծ գնդապետ Ա. Մարգարյան

<ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ>
Ուսումնավարժության ղեկավար
ՀՀ Արմավիրի մարզպետ

ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

„01" 03 2017թ.

## <u>ԲԱՑԱՏՐԱԳԻՐ</u>

Արմավիրի մարզպետարանում անցկացվող շտաբային
ուսումնավարժության մտահղացման

*<u>Թեման</u>* - <Ապարանի ջրամբարի պատվարի փլուզման վտանգի դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպումը>:

*<u>Ուսումնական նպատակները</u>*- 1.Կատարելագործել մասնակիցների ունակությունները ջրհեղեղի վտանգի դեպքում բնակչության պաշտպանությանմիջոցառումների կազմակերպման ուղղությամբ:
2.Կատարելագործել տարահանման մարմինների ունակությունները բնակչության տարահանման միջոցառումների կազմակերպման ուղղությամբ:

*<u>Ուսումնավարժության մասնակիցների կազմը.</u>*

- Արմավիրի մարզպետարան
- Մարզային փրկարարական վարչություն
- Մարզային ԱԻ հանձնաժողով
- Արմավիրի մարզի տարահանման հանձնաժողով
- Ամբերդ, Այգեշատ, Դողս, Աղավնատուն, Մրգաստան, Ծիածան, Ծաղկունք համայնքների համայնքապետեր:

*<u>Ուսումնավարժության անցկացման ժամկետը և վայրը.</u>*

- 23.03.2017թ. ժ.10.00-18.00, Արմավիրի մարզպետարան.

<u>Ելակետային տվյալներ</u>

Արմավիրի մարզում հիդրոտեխնիկական կառույցներ արհեստական ջրամբարների տեսքով չկան: Մարզի տարածքում է գտնվում Ակնալիճ բնական ջրամաբարը, որի մակարդակը տարածքի ռելիեֆից ցածր է և հարակից բնակավայրերին ջրածածկման վտանգ չի սպառնում:

Արագածոտնի մարզում գտնվող Ապարանի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում Արմավիրի մարզի 24 համայնքներ կհայտնվեն ջրածածկման վտանգի տակ՝ ջրածածկվող տարածքը 150 քառ. կմ, հնարավոր տուժած բնակչության թիվը կարող է կազմել 53304 մարդ, շենքերի թիվը 9204 միավոր, գյուղկենդանիների գլխաքանակը 9955 միավոր:

Մարտ ամսվա ընթացքում եղանակի կտրուկ տաքացման պատճառով, հարապետության լեռնային շրջաններում տեղացած առատ ձյունը կարճ ժամանակում սկսել է հալվել և առաջացած ջրային պաշարները լցվելով Ապարյանի ջրամբար, մի քանի օրում ջրամբարում ջրի ծավալը հասցվել է կրիտիկականի: Ջրամբարից Քասաղ գետով բաց թողնվող ջուրը, ընդգրկելով նաև

հեղեղատարների սելավային հոսքերը, առաջացրել է ափապաշտպան շերտերի լվացման և ափամերձ համայնքների հողերի ողողման վտանգ:

Ստեղծված իրավիճակը՝

Ձմռան ընթացքում տեղած առատ ձյան և Մարտ ամսվա ընթացքում եղանակի կտրուկ տաքացման պատճառով, Ապարանի ջրամբարի և մարզի տարածքով անցնող գետերի մակարդակը կտրուկ բարձրացել է, Քասաղ գետի ջրերը արդեն ողողում են ափամերձ տարածքները, առաջացնելով ջրածածկման սպառնալիք:

## I. ՓՈՒԼ – Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը ջրամբարի պատվարի փլուզման սպառնալիքի դեպքում

Փուլի տևողությունը - Օպերատիվ ժամանակով՝ 10.00-ից մինչև տարահանման ազդարարումը. Աստաբաշխական ժամանակով՝ 4 ժամ / 10.00- 13.40/:

Մասնակի իրադրություն.

Առկա է Ապարանի ջրամբարի պատվարի փլուզման վտանգ:
Մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովի որոշմամբ, Քասաղ և Մեծամոր գետերի ափամերձ համայնքները անցնում են <ՈՒժեղացված> աշխատակարգի:

Ուսումնական հարցերը.

1. Մարզի ղեկավար կազմի և վտանգավոր գոտու համայնքապետերի ազդարարում, իրավիճակի գնահատում:
2. Հեղեղումների կանխարգելման և հետևանքների նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացում:
3. Ջրածածկման գոտում հայտնվող բնակչության տարահանման, գյուղ. կենդանիների տեղափոխման, նյութական արժեք ների դուրս բերման կազմակերպում:

Ուսուցանվողների գործողությունները՝

Ժամը 10.00- ին իրականացնում են մարզի ղեկավար կազմի, Քասաղ /և Մեծամոր/ գետերի ափամերձ գյուղերի համայնքապետերի ազդարարում:
Ժամը 11.00- 11.30- ուսումնավարժության ղեկավարը անցկացնում է խորհրդակցություն, ծանոթացնում է իրադրությանը, կատարում խնդրադրումներ:
ՀՀ Արմավիրի մարզպետը տալիս է կարգադրություն բնակչության ազդարարման և մասնակի տարահանման վերաբերյալ:
Ժամը 11.30- 12.10 – իրականացնում են հեղեղումների կանխարգելման և հետևանքների նվազեցմանն ուղղված միջոցառումներ:
Ժամը 12:10-13:00 - կազմակերպում են բնակչության ազդարարում և իրազեկում, ներկայացվում է համայնքների բնակչության և գյուղ. կենդանիների տարահանման կարգը: Մարզի բուժ. Ծառայության ուժերով իրականացվում է տարահանման միջոցառումների բժշկական ապահովումը: Մարզի հիվանդանոցներում ծավալվում են լրացուցիչ մահճակալներ հնարավոր տուժածներին ընդունելու համար:
Ներկայացնում են զեկույցներ ստացված միջանկյալների վերաբերյալ:

Ժամը 13.00-13.40 – Առաջին փուլի ամփոփում:

## II. ՓՈՒԼ – Բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացումը ջրամբարի պատվարի փլուզման վտանգի սպառնալիքի և փլուզման դեպքում

Փուլի տևողությունը -օպերատիվ ժամանակով՝ 13.40-ից մինչև հետևանքների վերացման ավարտը:
աստղաբաշխական ժամանակով՝ 4 ժամ /13.40-18.00/:

Մասնակի իրադրություն.

Ապարանի ջրամբարի պատ-վարը փլուզվել է, ալիք հասել է
Ամբերդ, Այգեշատ, Դողս, Աղավնատուն, Մրգաստան, Ծիածան, Ծաղկունք համայնքներ: Վնասվել են բնակելի տները: Կան վթար-ներ կոմունալ-էներգետիկ ցանցերում:

Ուսումնական հարցերը.

1. Որոնողափրկարարական աշխատանքների կազմակերպումը:
2. Տարահանված բնակչության կենսաապահովման կազմակերպումը

Ուսուցանվողների գործողությունները՝

ժամը 13.40-15:20- Ներկայացնում են զեկույցներ որոնողափրկարարական աշխատանքների կազմակերպման, ներգրավվող ուժերի կազմի և աշխատանքների իրականացման վերաբերյալ: Կազմակերպում և իրականացնում են ջրածածկման գոտում հայտնված մարդկանց և կենդանիների դուրս բերումը, տուժածների բուժօգնության գործընթացը: Իրականացնում են ջրի հոսքը արգելափակող պատնեշների կառուցման, ինչպես նաև բնակելի տներից ջրահեռացման, աշխատանքներ: Մարզային փրկարարական վարչությունը ներկայացնում է որոնողա-փրկարարական աշխատանքներին մասնակցության հնարավորությունները:
ժամը 16.00-17.00- Ներկայացնում են ժամանակավոր բնակեցման վայրերում տարահանվածների, տուժածների բժշկական, նյութական և իրային ապահովման կազմակերպումը, զոհվածների հուղարկավորումը, անհայտ կորած անձանց ճշտումն ու փնտրումը:
Ներկայացնում են զեկույցներ ստացված միջանկյալների վերաբերյալ:
ժամը 17.00-17.30- 2-րդ փուլի ամփոփում:

Ուսումնավարժության արդյունքների ամփոփում՝ ժամը 17.30- 18.00

Ուսումնավարժության ավարտ՝ 18.00- ին:

Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

<ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ>
Ուսումնավարժության ղեկավար
ՀՀ Արմավիրի մարզպետ

Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

,, 01 ,, 03 2017թ.

# Պ Լ Ա Ն

Արմավիրի մարզպետարանում անցկացվող շտաբային
ուսումնավարժության

*Թեման* - < Ապարանի ջրամբարի պատվարի փլուզման վտանգի դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպումը >:

*Ուսումնական նպատակները*- 1.Կատարելագործել մասնակիցների ունակությունները ջրհեղեղի վտանգի դեպքում բնակչության պաշտպանությանմիջոցառումների կազմակերպման ուղղությամբ:
2.Կատարելագործել տարահանման մարմինների ունակությունները բնակչության տարահանման միջոցառումների կազմակերպման ուղղությամբ:

*Ուսումնավարժության մասնակիցների կազմը.*

- Արմավիրի մարզպետարան.
- Մարզային փրկարարական վարչություն.
- Մարզային ԱԻ հանձնաժողով,
- Արմավիրի մարզի տարահանման հանձնաժողով,
- Ամբերդ, Այգեշատ, Դողս, Աղավնատուն, Մրգաստան, Ծիածան, Ծաղկունք համայնքների համայնքապետեր:

*Ուսումնավարժության անցկացման ժամկետը և վայրը.*

- 23.03.2017թ. Արմավիրի մարզպետարան. ժ. 10.00-18.00-ն.

ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

| Ժամկետը | | Մշակվող ուսումնական հարցերը | Ստեղծված իրավիճակը | Ուսուցանվողների գործողությունները | Ուսումնավարժության ղեկավարի գործողությունները |
|---|---|---|---|---|---|
| օպերատիվ | աստղաբաշխ. | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| I. ՓՈՒԼ - Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը ջրամբարի պատվարի փլուզման սպառնալիքի դեպքում<br>Օպերատիվ ժամանակով՝ 10.00-ից մինչև տարահանման ազդարարումը<br>Աստղաբաշխական ժամանակով՝ 4 ժամ. /10.00- 13.40/ | | | | | |
| ժ.10.00-11.30 | ժ.10.00-11.30 | Մասնակիցների ազդարարում, իրավիճակի գնահատում: | Ձմռան ընթացքում տեղած առատ ձյան և մարտ ամսվա ընթացքում եղանակի կտրուկ տաքացման պատճառով, Ապարանի ջրամբարի և մարզի տարածքով անցնող գետերի մակարդակը կտրուկ բարձրացել է, Քասախ գետի ջրերը արդեն ողողում են ափամերձ տարածքները, առաջացնելով ջրածածկման սպառնալիք:<br>Առկա է Ապարանի ջրամբարի պատվարի փլուզման վտանգը | Արմավիրի ՄՓՎ ՃԿԿ-ի կողմից իրականացվում է մարզի ղեկավար կազմի ազդարարում: Արմավիրի ՄՓ վարչության անձնակազմին տրվում է «Հայտարարված է հավաք» ազդանշանը: Իրականացվում է վտանգավոր գոտու համայնքների համայնքապետերի ազդարարում: Ներկայանում են ունկնդրման: ՄՓՎ պետը ներկայացնում է ստեղծված իրավիճակը և տալիս առաջարկություն՝ մարզի արտակարգ իրավիճակներում գործելու պլանը համապատասխան մասով գործողության մեջ դնելու մասին: | Տալիս է մարզի ղեկավար կազմի և ջրածածկման գոտու համայնքների ղեկավարների ազդարարման կարգադրություն Ընդունում է որոշում մարզի ԱԻ-ում գործելու պլանը համապատասխան մասով գործողության մեջ դնելու մասին: |
| ժ.11.30-17.00 | ժ.11.30-12.10 | Հեղեղումների կանխարգելման և հետևանքների նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացում | Իրավիճակը նույնն է | Մասնակիցները զեկուցում են ջրաչափիչ կետերում շուրջօրյա հերթապահության կազմակերպման մասին: Ներկայացնում են առաջարկություններ ափապաշտպան պատնեշների բարձրացման և ամրացման աշխատանքներում ուժերի և միջոցների ներգրավման ուղղությամբ: | Տալիս է կարգադրություն կանխարգելիչ միջոցառումների իրականացման մասին |
| ժ.17.00-20.00 | ժ.12.10-13.00 | Ջրածածկման գոտում հայտ-նվող բնակչության տարա-հանման, | Իրավիճակը նույնն է | Ջրածածկման գոտու համայնքների ղեկավարների, մարզային հեռուստատեսության, ոստիկանության | Տալիս է կարգադրություն բնակչության ազդարարման և |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | գյուղ. կենդանիների տեղա փոխման, նյութական արժեք ների դուրս բերման կազ- մակերպում: | | ուժերի միջոցով կազմակերպում են բնակչության ազդարարումը և իրազեկումը:<br>Տարհանման հանձնաժողովը համաձայն տարահանման պլանի, ներկայացնում է համայնքների բնակչության և գյուղ. կենդանիների տարահանման կարգը, բնակիչների կողմից վարվեցողության կարգը ջրհեղեղների առաջացման վտանգի և առաջացման դեպքում: Մարզի բուժ. ծառայության ուժերով իրականացվում է տարահանման միջոցառումների բժշկական ապահովումը: Մարզի հիվանդանոցներում ծավալվում են լրացուցիչ մահճակալներ հնարավոր տուժածներին ընդունելու համար: | մասնակի տարահանման վերաբերյալ: |
| | ժ.12:15 | Տրվում է թիվ 1 միջանկյալը | Իրավիճակը համաձայն թիվ 1 միջանկյալի | Իրականացնում են գործողություններ համաձայն միջանկյալի | |
| | ժ.12;30 | Տրվում է թիվ 1 միջանկյալը | Իրավիճակը համաձայն թիվ 2 միջանկյալի | Իրականացնում են գործողություններ համաձայն միջանկյալի | |
| | ժ.12:40 | Տրվում է թիվ 1 միջանկյալը | Իրավիճակը համաձայն թիվ 3 միջանկյալի | Իրականացնում են գործողություններ համաձայն միջանկյալի | |
| | ժ.13.00-13.40 | Առաջին փուլի ամփոփում | | Ներկայանում են ամփոփմանը և զեկուցում կատարված աշխատանքների մասին | Կատարում է փուլի ամփո փում, գնահատում է մաս-նակիցների ելույթները: |
| II. ՓՈՒԼ – Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը ջրամբարի պատվարի փլուզման դեպքում օպերատիվ ժամանակով՝ 13.40-ից մինչև հետևանքների վերացումը. աստղաբաշխական ժամանակով՝ 4 ժամ /13.40- 18.00/ | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ժ.20.30-ից մինչև փրկարարական աշխատանքների ավարտը | | Որոնողափրկարարական աշխատանքների կազմակերպումը | Ապարանի ջրամբարի պատվարը փլուզվել է, ալիքը հասել է Ամբերդ, Այգեշատ, Դոդս, Աղավնատուն, Մրգաստան, Ծիածան, Ծաղկունք համայնքներ: Վնասվել են բնակելի տներ: Կան վթարներ կոմունալ-էներգետիկ ցանցերում: | Ներկայացնում են զեկույցներ որոնողափրկարարական աշխատանքների կազմակերպմանը ներգրավվող ուժերի կազմի և աշխատանքների իրականացման կարգի, որոնողափրկարարական և վթարավերականգնողական ուժերի խմբավորումների ապահովման կազմակերպման վերաբերյալ: Կազմակերպում և իրականացնում են ջրածածկման գոտում հայտնված մարդկանց և կենդանիների դուրս բերումը: Իրականացնում են ջրի հոսքը արգելափակող պատնեշների կառուցման, ինչպես նաև բնակելի տներից ջրահեռացման, աշխատանքներ: Կազմակերպում են տուժածների բուժօգնության գործընթացը: Մարզային փրկարարական վարչությունը ներկայացնում է որոնողափրկարարական աշխատանքներին մասնակցության հնարավորությունները: | Տալիս է կարգադրություն որոնողա փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպման վերաբերյալ: |
| | ժ.14.00- | Տրվում է թիվ 1 միջանկյալը | Իրավիճակը համաձայն թիվ 4 միջանկյալի | Իրականացնում են գործողություններ համաձայն միջանկյալի | |
| | ժ.14.30 | Տրվում է թիվ 1 միջանկյալը | Իրավիճակը համաձայն թիվ 5 միջանկյալի | Իրականացնում են գործողություններ համաձայն միջանկյալի | |
| | ժ.15.00 | Տրվում է թիվ 1 միջանկյալը | Իրավիճակը համաձայն թիվ 6 միջանկյալի | Իրականացնում են գործողություններ համաձայն միջանկյալի | |
| | ժ.15.15 | Տրվում է թիվ 1 միջանկյալը | Իրավիճակը համաձայն թիվ 7 միջանկյալի | Իրականացնում են գործողություններ համաձայն միջանկյալի | |
| | ժ.15.30 | Տրվում է թիվ 1 միջանկյալը | Իրավիճակը համաձայն | Իրականացնում են | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | թիվ 8 միջանկյալի | գործողություններ համաձայն միջանկյալի | |
| ժ.20.00մ ինչև տարահանվածներին իրենց բնակության վայր վերադարնալը | ժ.16.00-17.00 | Տարահանված բնակչության կենսաապահովման կազմակերպումը: | Իրավիճակը նույնն է | Ներկայացնում են ժամանակավոր բնակեցման վայրերում տարահանվածների, տուժածների բժշկական, նյութական և իրային ապահովման կազմակերպումը, զոհվածների հողարկավորումը, անհայտ կորած անձանց ճշտումն ու փնտրումը: | Ունկնդրում է մասնակիցներին, ուսումնասիրում հաշվարկների ճշտությունը: |
| | ժ.16.20 | Տրվում է թիվ 1 միջանկյալը | Իրավիճակը համաձայն թիվ 9 միջանկյալի | Իրականացնում են գործողություններ համաձայն միջանկյալի | |
| | ժ.16.40 | Տրվում է թիվ 1 միջանկյալը | Իրավիճակը համաձայն թիվ 10 միջանկյալի | Իրականացնում են գործողություններ համաձայն միջանկյալի | |
| | ժ.17.00-17.30 | Ուսումնավարժության երկրորդ փուլի արդյունքների ամփոփում | | Ներկայանում են ամփոփմանը | Կատարում է փուլի ամփոփում, գնահատում է մասնակիցների ելույթները |
| | ժ.17.30-18.00 | ՈՒսումնավարժության արդյունքների ամփոփում | | Ներկայանում են ունկնդրման | Ամփոփում է ուսումնավարժության ընթացքը, նշում է տեղ գտած թերությունները, տալիս դրանց վերացման ժամկետներ և գնահատում է ուսումնավարժության արդյունքները: |
| | ժ.18.00 | ՈՒսումնավարժության ավարտ | | | Տալիս է ուսումնավարժության ավարտի կարգադրություն: |

ՈՒսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված N1
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2017 թվականի [illegible]-ի
N---/ որոշման

# ԿԱԶՄ

## 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ԽՄԲԻ

| Հ/հ | Անուն, Ազգանուն | Զբաղեցրած պաշտոնը |
|---|---|---|
| 1 | Աշոտ Ղահրամանյան | ՀՀ Արմավիրի մարզպետ՝ ուսումնավարժության ղեկավար |
| 2 | Մովսես Քարտաշյան | ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ, մարզի տարահանման հանձնաժողովի նախագահ՝ ուսումնավարժության ղեկավարի տեղակալ |
| 3 | Հովհաննես Մարգարյան | ՀՀ ԱԻՆ ՓԾ Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետ՝ ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված N2
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2017 թվականի մարտի 2-ի
N--- որոշման

# Կ Ա Զ Մ
## 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՇՏԱԲԻ

| Հ/հ | Անուն, Ազգանուն | Զբաղեցրած պաշտոնը |
|---|---|---|
| 1 | Հովհաննես Մարգարյան | Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետ՝ ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ |
| 2 | Արտակ Կարապետյան | Արմավիրի մարզային փրկարարական վարչության ԲՊԲ պետ - վարչության պետի տեղակալ՝ խաղարկման և վերլուծության խմբի ղեկավար |
| 3 | Գառնիկ Ղուկասյան | Արմավիրի մարզային փրկարարական վարչության ՃԿԿ ավագ հրահանգիչ, խաղարկման և վերլուծության խմբի անդամ |
| 4 | Վահան Սրեյան | Արմավիրի մարզային փրկարարական վարչության ԲՊԲ ավագ հրահանգիչ, խաղարկման և վերլուծության խմբի անդամ |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

*Հավելված N3*
*Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի*
*2017 թվականի մարտի [illegible]-ի*
*N--- որոշման*

## *ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ*

***Արմավիրի մարզպետարանում 2017 թվականի մարտի 23-ին անցկացվելիք շտաբային ուսումնավարժության նախապատրաստման***

| Հ/հ | Միջոցառման անվանումը | Կատարման ժամկետը | Պատասխանատու, կատարողներ | Նշումներ կատարման մասին |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 2 | Մտահղացման բացատրագրի մշակում | մինչև 24.02 | Ղեկավարման շտաբ | |
| 3 | ՇՈՒ անցկացման պլանի մշակում | մինչև 27.02 | Ղեկավարման շտաբ | |
| 4 | ՈՒսունավարժության փաստաթղթերի հաստատում | մինչև 28.02 | Ղեկավարման շտաբ | |
| Ուսուցանվողների նախապատրաստումը | | | | |
| 5 | ՇՈւ կազմակերպման և անցկացման փաստաթղթերի հետ ծանոթացում | մինչև 13.03 | Ղեկավարման շտաբ | |
| 6 | Փոխհամագործակցության պլանների և ԱԻ ոլորտին առնչվող իրավական ակտերի ուսումնասիրում | մինչև 15.03 | Ղեկավարման շտաբ | |
| 7 | Ծառայությունների գործառույթների ճշտում | մինչև 17.03 | Ղեկավարման շտաբ | |

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ф. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**